ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1291-24.03.2026-ՊԱ-011/0), «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1291[1]-24.03.2026-ՊԱ-011/0), «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1291[2]-24.03.2026-ՊԱ-011/0), «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1291[3]-24.03.2026-ՊԱ-011/0) և «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1291[4]-24.03.2026-ՊԱ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1291-24.03.2026-ՊԱ-011/0), «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1291[1]-24.03.2026-ՊԱ-011/0), «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1291[2]-24.03.2026-ՊԱ-011/0), «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1291[3]-24.03.2026-ՊԱ-011/0) և «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1291[4]-24.03.2026-ՊԱ-011/0)(այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական

փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«*1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:*

2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:

Հիմք ընդունելով վերոնշյալ դրույթներն առաջարկում ենք «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ամբողջ տեքստում միևնույն միտքն արտահայտելիս ապահովել բառերի, տերմինների և բառակապակցությունների կիրառման միատեսակություն, ինչպես նաև կիրառել նորմատիվ իրավական ակտերով սահմանված հասկացությունները: Մասնավորապես՝

1) Նախագծի ամբողջ տեքստում «վարչապետ» եզրույթը կիրառվում է և՛ մեծատառով, և՛ փոքրատառով: Առաջարկում ենք պահպանել միատեսակ մոտեցում՝ ընտրելով մեկ ձև (մեծատառ կամ փոքրատառ) և կիրառել այն Նախագծի ամբողջ տեքստում՝ հաշվի առնելով նաև «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) կիրառված ձևը:

2) Նախագծի 11-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 19.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում կիրառվում է «կազմակերպչական հաստիքային», իսկ նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «կազմակերպչական-հաստիքային» ձևակերպումները: Առաջարկում ենք Նախագծի նշված դրույթներում նույն հասկացությունը կիրառել նույն կերպ:

3) Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ գլխում ներառված 23.1-ին հոդվածի 4-րդ մասում «ՀՀ կառավարությունը» բառերն առաջարկում ենք փոխարինել «Կառավարությունը» բառով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված և Օրենքում կիրառված ձև:

4) Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասում «ենթաօրենսդրական ակտերն» բառերն առաջարկում ենք փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը:

Նույն դիտարկմամբ առաջարկում ենք «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցրած անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասում «իրավական ակտն» բառերը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն» բառերով:

5) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում «N 1 հավելվածը» բառերն առաջարկում ենք փոխարինել «1-ին հավելվածը» բառերով՝ հիմք ընդունելով Օրենքում կիրառված ձևը:

2. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ «*Ծառայության աշխատակիցների, ստորաբաժանումների, շինությունների և տրանսպորտային միջոցների քողարկման նպատակով օգտագործում է* ***պետական մարմինների*** *և* ***կազմակերպությունների*** *փաստաթղթերը, միջոցները, որոնք անհրաժեշտ են քողարկման համար*»: Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվող Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում նոր լրացվող նախադասության համաձայն համապատասխան պետական մարմինները և **կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը)** պատասխանատվություն չեն կրում Ծառայությանը տրամադրված փաստաթղթերի, միջոցների գործածության արդյունքում առաջացած հետևանքների համար: Ցանկանում ենք նշել, որ վերոգրյալի համատեքստում առկա է հակասություն Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի 1-ին և Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետով նոր լրացվող 2-րդ նախադասությունների միջև, քանզի ծառայության աշխատակիցների կողմից օգտագործում է պետական մարմինների և կազմակերպությունների փաստաթղթերը, միջոցները և ոչ անհատ ձեռնարկատերերի, ուստի վերջիններիս պատասխանատվության վերաբերյալ խնդիր ի սկզբանե չի կարող առաջանալ: Առաջարկում ենք նախատեսվող կարգավորումը լրամշակել և հակասությունը վերացնել:

3. Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ կետով Օրենքի 12-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասում նշված «ՀՀ» հապավումն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի

Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է. *«Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ»*:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծերի փաթեթում առկա բոլոր հապավումներին:

3. Նախագծի 4-րդ հոդածի 5-րդ կետով Օրենքի 12-րդ հոդվածում լրացվող նոր՝ 3-րդ մասում առաջարկում ենք «4.1. կետերի» ձևակերպումը փոխարինել «4.1-ին կետի» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով դասական թվականների ճիշտ գրելաձևը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հղում է կատարվում միայն մեկ կետի:

4. Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 13-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է ծառայողի պարտականությունները ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելուց ***առաջ***: Միևնույն ժամանակ, նշված պարտականությունների շարքում ներառված են այնպիսի պարտականություններ, որոնք իրենց բնույթով կարող են ծագել արդեն ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման արդյունքում, մասնավորապես՝ մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին օգնություն ցույց տալը (3-րդ մասի 3-րդ կետ) և ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք գործադրելու ***հետևանքով*** վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաև հատուկ միջոցներ և զենք գործադրելու յուրաքանչյուր դեպքի մասին վերադասության կարգով անհապաղ զեկուցելը (3-րդ մասի 4-րդ կետ): Հարկ ենք համարում նշել, որ նշված պարտականությունները և այդ պարտականությունների իրականացման սահմանված պահի միջև առկա է ներքին հակասություն, քանի որ նշված պարտականությունների իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գորածադրման արդյունքում որպես հետևանք առաջացել են օրինակ՝ վիրավորներ կամ մահ: Ուստի քննարկվող պարտականությունների իրականացումը նախքան ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելը հնարավոր չէ: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 13-րդ հոդվածի 3-րդ մասում բացառել ներքին հակասությունը: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված դրույթից, այն է.

«*Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները.*»

5. Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 13-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված է, որ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման ***բոլոր դեպքերի*** մասին Ծառայության ծառայողը պարտավոր է անհապաղ զեկուցել իր անմիջական ղեկավարին: Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում ևս սահմանված է Ծառայության ծառայողի պարտականությունը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք գործադրելու հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաև հատուկ միջոցներ և զենք գործադրելու ***յուրաքանչյուր դեպքի*** մասին վերադասության կարգով անհապաղ զեկուցելու վերաբերյալ: Մեջբերված դրույթներում անհիմն կրկնություն է, ուստի առաջարկում ենք Նախագծում բացառել անհիմն կրկնությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը:

6. Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 13.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Ծառայության ծառայողն իրավունք ունի հատուկ միջոցներ կիրառել հետևյալ դեպքերում՝ (…) իր կամ Ծառայության այլ աշխատողների կամ Ծառայության տարածքներում (օբյեկտներում) գտնվող երրորդ անձանց վրա **հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կամ ցույց տրվող դիմադրությունը կանխելիս**»: Միևնույն ժամանակ Նախագծի նույն հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 13.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Ծառայության ծառայողն իրավունք ունի զենք գործադրել հետևյալ դեպքերում՝ (…) իր կամ Ծառայության այլ աշխատողների կամ Ծառայության տարածքներում (օբյեկտներում) գտնվող երրորդ անձանց **կյանքին և առողջությանը իրական վտանգ սպառնացող հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կանխելիս**.»: Ցանկանում ենք նշել, որ այս ձևակերպումները կարող են առաջացնել «հարձակում», «հարձակման սպառնալիք» հասկացությունների բովանդակության վերաբերյալ տարընկալումներ և որոշ դեպքերում անորոշություններ: Առաջարկում ենք հստակություն ապահովելու նպատակով այնպիսի «զգայուն» հարաբերություն, ինչպիսին է հատուկ միջոցների և զենքի կիրառումը, կարգավորել խիստ որոշակի իրավանորմերով, որտեղ յուրաքանչյուր հասկացություն իր իմաստի և բովանդակային ծավալի վերաբերյալ կասկած չի հարուցի և հստակ սահմանված

կլինի, ինչպես օրինակ նախատեսված է «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1.1-ին մասով:

7. Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 13.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետն առաջարկում ենք խմբագրել այնպես, որ դրանում առկա «/» կատադրական նշանը վերացվի՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայերենում նման կետադրական նշան առկա չէ:

8. Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 19-րդ հոդվածում լրացնել նոր՝ 5-րդ մաս, ըստ որի՝ «*Ծառայության դասային աստիճանները սույն օրենքով սահմանված կարգով շնորհվում են նաև Ծառայության պետին և Ծառայության պետի տեղակալներին:*»: Հարկ ենք համարում նշել, որ Օրենքի 19-րդ հոդվածը, կրելով «Ծառայության ծառայողներին պաշտոնի նշանակելը» վերնագիրը, պարունակում է կարգավորումներ պաշտոնի նշանակման ընթացակարգի վերաբերյալ, իսկ Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 19-րդ հոդվածում լրացվող նոր 5-րդ մասը, պարունակելով կարգավորում Ծառայության պետին և Ծառայության պետի տեղակալներին դասային աստիճանի շնորհման վերաբերյալ, առաջացնում է հոդվածի վերնագրի և հոդվածի բովանդակության համապատասխանության խնդիր: Հետևաբար առաջարկում ենք վերանայել Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 19-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասը և ապահովել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է՝ «*Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը:*»:

9. Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 21-րդ հոդվածի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասով սահմանված է. «*Ծառայության ծառայողները, իրենց դիմումի համաձայն, գրանցվում են կադրերի ռեզերվում հաստիքների կրճատման, <u>Ծառայության վերակազմակերպման կամ Ծառայության կառուցվածքային փոփոխության</u> դեպքերում, եթե Ծառայության ծառայողին հավասարազոր պաշտոնի նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի բարձր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց*»: Այսպես՝ քննարկվող նորմում որպես կադրերի ռեզերվում գրանցվելու առանձին հիմքեր նշվում են Ծառայության վերակազմակերպումը և Ծառայության կառուցվածքային փոփոխությունը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է. «*Պետական մարմնի **կառուցվածքային***

փոփոխությունն *իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման, միաձուլման, միացման, առանձնացման, բաժանման,* ***վերակազմավորման*** *կամ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման եղանակներով*»: «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով իր հերթին սահմանված է. «*Պետական մարմինը* ***վերակազմակերպվում****՝ միաձուլվում, միացվում, բաժանվում, առանձնացվում,* ***վերակազմավորվում*** *է օրենքով*»:

Վերը մեջբերվածից բխում է, որ «կառուցվածքային փոփոխություն» հասկացությունն իր մեջ արդեն իսկ ներառում է համապատասխան մարմնի վերակազմակերպումը, հետևաբար հասկանալի չէ, թե Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում վերը նշված ձևակերպումներն ինչու են առանձին նշված: Առաջարկում ենք սույն դիտարկման հիման վրա քննարկվող նորմում կատարել համապատասխան փոփոխություն:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին և 2-րդ կետերին:

10. Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ գլխում ներառված 23.1-ին և 23.2-րդ հոդվածների համարները տեքստից առաջարկում ենք բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված դրույթը, որի համաձայն. «*Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով.*»:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 24-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 41.1-ին հոդվածին:

11. Նախագծի 15-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 23.2-րդ հոդված 1-ին մասում Օրենքի 19-րդ հոդվածին կատարվող հղումն առաջարկում ենք շտկել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենքի 19-րդ հոդվածը 6-րդ մաս չունի, ինչպես նաև փորձաշրջանի վերաբերյալ կարգավորումների բացակայությունը 19-րդ հոդվածից:

12. Նախագծի 22-րդ հոդվածում 3-րդ կետին հաջորդում է 3-րդ կետ, ուստի առաջարկում ենք ապահովել համարակալման հաջորդականությունը:

13. Նախագծի 24-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 41.1-ին հոդվածով սահմանվում է ծառայության ծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական

երաշխիքները: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, թե այդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նշված «ընտանիքի անդամ» հասկացության շրջանակում ով է ընդգրկված: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ Նախագծի 23-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 41-րդ հոդվածով սահմանվող ծառայության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների պաշտպանության վերաբերյալ կարգավորումներում նմանատիպ հստակեցում առկա չէ, ինչի արդյունքում հասկանալի չէ, թե այդ հոդվածի իմաստով ով է համարվում ընտանիքի անդամ: Առաջարկում ենք սույն դիտարկման հիման վրա հստակեցնել Նախագծի 23-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 41-րդ հոդվածը:

14. Նախագծի 24-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 41.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ծառայողներին ըստ ծառայության տարիների վճարվում է միանվագ նպաստ՝

- «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի հիման վրա կենսաթոշակի անցնելիս կամ
- Ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալիս,
- կամ աշխատողի հետ կնքված պայմանագրի ժամկետը լրանաիս,
- կամ առողջական վիճակի պատճառով ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս,
- կամ **հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կապակցությամբ Ծառայությունից ազատվելիս**:

Հարկ ենք համարում նշել, որ հաստիքների կրճատումը, ի թիվս այլնի, որպես Ծառայությունից ազատման հիմք նախատեսված է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, իսկ ստորաբաժանումների լուծարումը կառուցվածքային փոփոխության մասնավոր դեպք է միայն, ինչպես հետևում է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասից: Այսինք սույն իրավանորմը չի տարածվի Ծառայության վերակազմակերպման կամ կառուցվածքային այլ փոփոխության արդյունքում ծառայությունից ազատված ծառայողների նկատմամբ: Նախագծի 24-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 41.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ձևակերպման արդյունքում նույն կարգավիճակով և նույնաման հիմքով ազատված աշխատակիցներից ոմանց Ծառայությունից ազատվելիս կվճարվի միանվագ նպաստ, իսկ ոմանց՝ ոչ: Վերոգրյալի լույսի ներքո՝ հարկ ենք համարում

նշել, որ նույնանման հիմքով ազատված մյուս աշխատակիցների նկատմամբ սույն իրավանորմի չկիրառումը կարող է դիտարկվել որպես տարբերակված մոտեցում:

Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը **զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից** (ՍԴՈ-881): Ուստի առաջարկում ենք կա՛մ Նախագծի հիմնավորմամբ ներկայացնել այսպիսի տարբերակված մոտեցման օբյեկտիվ հիմքը և իրավաչափ նպատակը, կա՛մ կարգավորումը տարածել համանման իրավական ռեժիմում գտնվող բոլոր ծառայողների վրա:

15. Ծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները սահմանող՝ Նախագծի 24-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 41.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «(...) *Ընտանիքի անդամ են համարվում՝ ծառայողի հետ* ***համատեղ բնակվող*** *18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քույրը կամ եղբայրը, եթե հաշմանդամություն ունեցող անձ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են ծառայողի* ***խնամքի տակ գտնվող****, եթե օրենքով սահմանված կարգով սահմանվել է խնամակալություն, և նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում*:»: Հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 24-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 41.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, թվարկելով ծառայողի ընտանիքի անդամին առաջադրվող պահանջներ, նրանցից ոչ մեկը չի կապել ընտանիքի անդամի՝ ծառայողի խնամքի տակ գտնվելու հանգամանքի հետ, և իրավական նշանակություն տրվել է միայն «համատեղ ապրելու» հանգամանքին: Ուստի առաջարկում ենք Նախագծի 24-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 41.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը վերանայել և որոշակիացնել այն հասկացությունները միայն, որոնց իրավական նշանակություն տրվել է սուբյեկտի իրավական կարգավիճակը որոշելիս:

16. Օրենքի 42-րդ հոդվածի գործող 4-րդ և 5-րդ մասերով սահմանված է.

«4. Ծառայության ծառայողին չի տրվում պաշտոնի նշանակման, այլ պաշտոնի տեղափոխման, ազատման, ծառայությունը դադարեցնելու կամ նրա նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին հրամանի պատճենը, եթե հրամանը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն: Այդ դեպքում նրան տրվում է հրամանի քաղվածք, որից հանվում է պետական կամ ծառայողական գաղտնիքը կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը:

5. Ծառայության ծառայողներին պետական և ծառայողական գաղտնիքներին առնչվելու թույլտվություն տրվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով սահմանված կարգով:»:

Նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ կետով Օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում վերջինս կարգավորում է **միայն** պետական գաղտնիքին առնչվելու թույլտվության տրման գործընթացը, հետևաբար հասկանալի չէ, թե ինչպես է կարգավորվում ծառայողական գաղտնիքին առնչվելու թույլտվության տրման գործընթացը:

17. Նախագծի 26-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «*Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, **բացառությամբ** փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի*»:

Նույն դիտարկումը վերաբերելի է Նախագծերի փաթեթի այլ նախագծերում առկա վերնագիր ունեցող հոդվածներին:

18. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսվող «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 26-րդ հոդվածում լրացվող նոր 3-րդ մասով Արտաքին հետախուզության ծառայության պետը լիազորվում է Արտաքին հետախուզության ծառայության պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց սոցիալական փաթեթին համարժեք գումարի չափով հատուցում վճարելու կարգը սահմանել: Առաջարկում ենք այս նոր լիազորությունը ներառել Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվող լիազորությունների թվում՝ կարգավորումը առավել լիարժեք և որոշակի դարձնելու նպատակով:

19. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՕ-604-Ն օրենքին հղում կատարելիս գտնում ենք, որ բացակայում է 6-րդ հոդվածի վերնագրի հիշատակման անհրաժեշտությունը՝ առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածով նախատեսվող հղում կատարելու ընդհանուր կանոններով:

20. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՕ-604-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, որն իր բնույթով անցումային է և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի որոշ դրույթների գործողության առանձին ժամկետ է նախատեսել: Գտնում ենք, որ այն ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ այս անցումային դրույթը կորցնելու է իր իրավական նշանակությունը և թիրախային հարաբերությունների նկատմամբ այլևս կիրառելի չի լինելու:

21. «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ նախագծում «Օրենք» կրճատ տարբերակն այլևս չի կիրառվում:

Միաժամանակ՝ առաջարկում ենք այդ հոդվածում նշված «Հանրային ծառայության մասին» օրենքի համարում առկա վրիպակը շտկել:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումները կարող են խնդրահարույց լինել խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված դիտարկումների հիման վրա ապահովել Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումների իրավական որոշակիությունը, հստակությունը, համապատասխանությունը միմյանց, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Կատարողներ՝ Ա. Ղազարյան (հեռ.՝ 011-513-248),
Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248),
Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)
10.04.2026թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Կատարողներ՝ Ա. Ղազարյան (հեռ.՝ 011-513-248),
Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248),

Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)
10.04.2026թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված Նախագծերի փաթեթով առաջարկվում է օրենքով հստակ կարգավորել Արտաքին հետախուզական ծառայությունում (այսուհետ՝ Ծառայություն) ծառայողին բարձր, հավասար կամ ցածր պաշտոնի փոխադրելու կամ նշանակելու հարաբերությունները, բացառել օրենքի տարբեր հոդվածների միջև առկա տարընկալումը և ատեստավորման գործընթացի մասով ապահովել հստակություն և իրավական որոշակիություն, Ծառայության ծառայողներին հատկացվող արձակուրդների շարքում ավելացնել նաև հայրության նպատակային արձակուրդի տեսակը, ինչպես նաև՝ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ հատկացնել նաև Ծառայության տղամարդ ծառայողներին, Ծառայողին հատկացնել 15-25, և 25 ու ավելի տարի ծառայելու դիմաց լրացուցիչ արձակուրդ՝ ծառայությունում երկարատև ստաժի առկայության ու դրան համարժեք հանգստի ժամանակի ապահովման անհրաժեշտությամբ, հստակեցնել Ծառայության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, զենքի և հատուկ միջոցների կիրառման դեպքերը, սահմանել լիազորող նորմ Ծառայության պետի կողմից զենքի և հատուկ միջոցների ցանկը, դրանց հաշվառման, հատկացման, կրման և պահելու կարգը սահմանելու մասին, ինչպես նաև կատարել այնպիսի փոփոխություններ և լրացումներ (այդ թվում՝ նաև հարակից օրենքներում), ինչը թույլ կտա կարգավորել օրենքում տեղ գտած բացերը, բացահայտված խնդիրներին տալ իրավական կարգավորում և բացառել գործնականում առաջացող կամ հնարավոր համարվող խնդիրները և ապահովել Ծառայության գործառույթների պատշաճ իրականացումը:

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ
(հեռ.՝ 011 513-668)
30.03.2026թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

ՀՀ Կառավարության կողմից ներկայացվել է ««Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Օպերատիվ-հետախուզական գործունության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ):

Նախագծերի փաթեթով հստակեցվում և կանոնակարգվում են արտաքին հետախուզության ծառայությունում ծառայողին բարձր, հավասար կամ ցածր պաշտոնի փոխադրելու կամ նշանակելու հարաբերությունները, ինչպես նաև Նախագծերի փաթեթով ներկայացված իրավակարգավորումները միտված են ապահովելու ատեստավորման գործընթացների հստակությունը և իրավական որոշակիությունը, ինչպես նաև բացառելու ներկայացված օրենքներում առկա տարընկալումները:

Բացի այդ, Նախագծերի փաթեթով առաջարկվում է կարգավորել արտաքին հետախուզության ծառայության ծառայողի սոցիալական իրավունքներից բխող, մասնավորապես՝ հայրության արձակուրդի որպես նպատակային արձակուրդի տեսակի, ծառայողներին հատկացվող արձակուրդների շարքում ավելացնելու, ինչպես նաև՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ հատկացնելու վերաբերյալ հիմնահարցերը:

Ավելին, ներկայացված Նախագծերի փաթեթով ոչ միայն հստակեցվում է սույն ծառայության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, զենքի և հատուկ միջոցների կիրառման դեպքերն ու իրավական կանոնակարգման ընթացակարգերը, այլ նաև ամրագրվում է արտաքին հետախուզության ծառայության ծառայողի կողմից անձին ձերբակալելու իրավասության վերապահման հնարավորությունը:

Հավելենք նաև, որ Նախագծերի փաթեթով հստակեցվում և սահմանվում են ծառայության ծառայողներին կադրերի ռեզերվում ընդգրկելու, պաշտոնից ազատելու հիմքերի, կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածի՝ որպես ծառայության ստաժ համարվելու, խրախուսման տեսակներում կարգապահական տույժի կիրառումը ժամկետից շուտ հանելու վերաբերյալ իրավական հնարավորության ընթացակարգեր:

Հետևաբար, մեր կողմից սույն գործընթացի, այն է՝ արտաքին հետախուզության ծառայության դեմիլիտարիզացիայի (ապառազմականացման), մասնավորապես՝ արտաքին հետախուզության ծառայության ծառայողների կոչումների փոխարեն դասային աստիճան սահմանելու գործընթացին, որոնք, ըստ էության, ավելի համահունչ են արտաքին հետախուզության ծառայության բնույթին, վերջիններիս սոցիալական հիմնախնդիրներն ու ռիսկերը վեր հանելու նպատակով սոցիալական փորձաքննության իրականացման համատեքստում կատարված ինչպես միջազգային փորձի, այնպես էլ՝ մի շարք միջազգային իրավական ակտերով ամրագրված անձի սոցիալական իրավունքներից բխող սոցիալական պաշտպանության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրենք, որ սույն օրենսդրական փոփոխությունների համատեքստում (Հայաստանում արտաքին հետախուզության ծառայության իրավական անցումը քաղաքացիական հատուկ ծառայության մոդուլի) առկա չեն անձի սոցիալական իրավունքներից բխող սոցիալական ռիսկեր:

Մասնավորապես, մեր կողմից իրականացված փորձաքննության արդյունքում անհրաժեշտ ենք համարում փաստել, որ Նախագծերի փաթեթով ներկայացված

իրավակարգավորումները միջազգային իրավական ակտերով երաշխավորված սոցիալական իրավունքների համատեքստում բխում են սոցիալական երաշխիքներ ամրագրող մի շարք կոնվենցիաներով սահմանված միջազգային իրավանորմերից, մասնավորապես՝ Վերանայված եվրոպական սոցիալական Խարտիայի *(Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2001 թվականի հոկտեմբերի 18-ին)* «Աշխատանքի իրավունք» վերտառությամբ 1-ին հոդվածով, «Մասնագիտական ուսման իրավունքը» վերտառությամբ 10-րդ հոդվածով, «Սոցիալական ապահովության իրավունքը» վերտառությամբ 12-րդ հոդվածով, ինպես նաև «Ընտանիքի սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքը» վերտառությամբ 16-րդ հոդվածով սահմանված սոցիալական իրավունքներ ամրագող իրավակարգավորումներից, ինչպես նաև ՄԱԿ-ի 1966 թվականի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների» Միջազգային Դաշնագրի *(Հայաստանի Հանրապետությունը միացել է Դաշնագրին 1993 թվականի հունիսի 9-ին)* 3-րդ, 7-րդ և 9-րդ հոդվածներով սահմանված իրավադրույթներից:

Նախագծերի փաթեթով ապահովված են նաև ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության «Սոցիալական ապահովություն» վերտառությամբ 83-րդ հոդվածով ամրագրված սահմանադրաիրավական նորմերից բխող անձի սոցիալական իրավունքների այնպիսի հայեցակարգային բաղադրիչներ, ինչպիսիք են սոցիալական պաշտպանվածությունն ու սոցիական երաշխիքները:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում հավելել, որ ներքոհիշյալ աղյուսակում ներառված մի շարք երկրներում, գործառութային առումով համանուն ծառայությունները տարբեր ժամանակագրությամբ, նույնպես, դեմիլիտարիզացիայի գործընթաց իրականացրել են՝ պայմանավորված անձի սոցիալական իրավունքներից բխող սոցիալական երաշխիքների և սոցիալական ռիսկերի բացառման ապահովման համատեքստում: Ստորև, ըստ երկրների, ներկայացնում ենք մեր կողմից իրականացված միջազգային փորձի արդյունքները:

N	Երկիր	Կանոնակարգող օրենքի անվանումը	Զինվորական կոչում կամ դասային աստիճան (կամ կոչումից անցում դասային աստիճանի և հակառակը)	Կառույցը անմիջապես հաշվետու է
1.	Բելառուս	«Պետական անվտանգության մամիններին մասին» օրենք[1]	**զինվորական կոչում**	Երկրի Նախագահ
2.	Վրաստան	«Վրաստանի հետախուզական ծառայության մասին» օրենք[2]	**դասային աստիճան /դեմիլիտարիզացված/**	Երկրի Նախագահ
3.	Ղազախստան	«Հատուկ պետական մարմինների մասին» օրենք [3]	**զինվորական կոչում**	Երկրի Նախագահ
4.	Ռուսաստան	«Արտաքին հետախուզության մասին» Դաշնային օրենք[4]	**զինվորական կոչում**	Երկրի Նախագահ
5.	Իսրայել	«Իսրայելի անվտանգության ծառայության մասին» օրենք[5]	**դասային աստիճան /դեմիլիտարիզացված/**	Վարչապետ

[1] Տես՝ Պետական անվտանգության կոմիտեի Նախագահի կայք էջ՝ https://president.gov.by/ru/statebodies/komitet-gosudarstvennoy-bezopasnosti
[2] Տես՝ Վրաստանի կառավարության օրենսդրության պաշտոնական կայք էջ՝ https://matsne.gov.ge/en
[3] Տես՝ Ղազախստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի տեղեկատվական-իրավական համակարգի պաշտոնական կայք էջ՝ https://adilet.zan.kz/rus
[4] Տես՝ ՌԴ Արտաքին հետախուզության ծառայության պաշտոնական կայք էջ՝ http://svr.gov.ru/
[5] Տես՝ Իսրայելի կառավարության կայք էջ՝ https://www.gov.il/en

6.	Գերմանիա	«Դաշնային հետախուզական ծառայության մասին» օենք[6]	**դասային աստիճան /դեմիլիտարիզացված/**	Վարչապետ/ Դաշնային Կանցլեր
7.	Լեհաստան	«Ներքին անվտանգության մասին» օրենք[7]	**զինվորական կոչումներ**	Վարչապետ
8.	Միացյալ Թագավորություն	«Հետախուզական ծառայությունների մասին» օրենք[8]	**դասային աստիճան /դեմիլիտարիզացված/**	Վարչապետ
9.	Չեխիա	«Հետախուզական ծառայությունների մասին» օրենք[9]	**Կոչումներ/Աստիճաններ /խառը մոդել/**	Վարչապետ
10.	ԱՄՆ	«Արտաքին հետախուզության հսկողության մասին» օրենք[10]	**դասային աստիճան /դեմիլիտարիզացված/**	Երկրի Նախագահ
11.	Արգենտինա	«Ազգային հետախուզության մասին» օրենք[11]	**դասային աստիճան /դեմիլիտարիզացված/**	Երկրի Նախագահ
12.	Բրազիլիա	«9.883» հանրային օրենք[12]	**դասային աստիճան /դեմիլիտարիզացված/**	Երկրի Նախագահ

[6] Տես՝ Գերմանիայի արդարադատության դաշնային նախարարության օրենսդրության կայք էջ՝ https://www.bmjv.de/EN/home/home_node.html

[7] Տես՝ Լեհաստանի Սեյմի /Խորհրդարան/ իրավական ատերի էլ. համակարգի կայք էջ՝ https://www.sejm.gov.pl/, https://www.sejm.gov.pl/english/prace/prace.html

[8] Տես՝ Միացյալ Թագավորության օրենսդրության պաշտոնական կայք էջ՝ https://www.legislation.gov.uk/

[9] Տես՝ Չեխիայի օրենսդրական տվյալների պաշտոնական կայք էջ՝ https://n-lex.europa.eu/n-lex/info/info-cz/index

[10] Տես՝ ԱՄՆ Կոնգրեսի պաշտոնական կայք էջ՝ https://www.congress.gov/

[11] Տես՝ Արգենտինայի արդարադատության նախարարության իրավական տեղեկատվական կայք էջ՝ https://www.argentina.gob.ar/justicia

[12] Տես՝ Բրազիլիայի Նախագահի պաշտոնական կայք էջ՝ https://www.gov.br

Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալ դիտարկումներն ու մոտեցումները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ սույն Նախագծերի փաթեթով կարգավորվող հիմնահարցերը թե՛ միջազգային իրավանորմերով ամրագրված սոցիալական երաշխիքներ սահմանող հայեցակարգային ընթացակարգերի, թե՛ միջազգային պրակտիկայի սույն ոլորտում առկա սոցիալական հիմնախնդիրների համատեքստում, բովանդակում են սոցիալական իրավունքներից բխող պատշաճ սոցիալական երաշխիքներ, որոնք էլ, իրենց հերթին, բխում են սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության սահմանադրական երաշխիքների ապահովման կարևորագույն հիմնադրույթներից, մասնավորապես, համաձայն որի՝ սոցիալական պետությունը բոլոր դեպքերում ձգտում է երաշխավորել իր քաղաքացիների բավարար կենսամակարդակը, հուսալի սոցիալական պաշտպանությունն ու ապահովությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալ մոտեցումներն ու դիտարկումները՝ նշենք, որ Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը սոցիալական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Քոչարյան (հեռ.՝ 011-513-235)
07.04.2026թ.